

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ**

_____ **Տ. Դավթյան**

_____ **Գ. Խաչատրյան**

1 հոկտեմբերի 2010 թ.

N 648-Ն

5 հոկտեմբերի 2010 թ.

N 12

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

«ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԶՄՓԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՈՉ ՃԻՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏՈՒԳԱՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Առևտրային կազմակերպությունը (անհատ ձեռնարկատերը) 2007 թվականի հունվարի 1-ից մինչև 25-ը իր հաշվառման հարկային մարմին ներկայացրել է հայտարարագիր՝ 2007 թվականի պարզեցված հարկ վճարող համարվելու համար: Նշվածը կատարվել է այն դեպքում, երբ 2006 թվականի իրացման շրջանառությունը (այդ թվում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով) գերազանցել է 50,0 մլն դրամը: Այնուհետև՝ 2007 թվականի 1-ին եռամսյակում առևտրային կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ներկայացվել է դիմում պարզեցված հարկով գործունեության դադարեցման մասին և փոխարենը ներկայացվել են ԱԱՀ-ի հաշվարկներ հունվար-փետրվար ամիսների համար: Համաձայն դիմումի՝ 2007 թվականի մարտից առևտրային կազմակերպությունը (անհատ ձեռնարկատերը) զբաղվում է միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեությամբ:

«Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (6 հունիսի 2000 թվական, ՀՕ-61, այսուհետ՝ Օրենք) համաձայն (2007 թվականի գործող խմբագրությամբ)՝

1) պարզեցված հարկ վճարողներ կարող են համարվել անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 50,0 մլն դրամը (հոդված 4, կետ 2).

2) Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին բավարարող պարզեցված հարկ վճարողներն այդպիսիք համարվելու համար իրենց հաշվառման հարկային մարմին են ներկայացնում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության սահմանած ձևով հայտարարագիր՝ այդ դեպքում հարկ վճարողը համարվում է պարզեցված հարկ վճարող ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով, բացառությամբ այն տեսակների, որոնք հարկվում են հաստատագրված վճարներով (հոդված 5, կետ 1).

3) պարզեցված հարկ վճարողները Օրենքի 5 հոդվածի 1-ին կետով նախատեսվող հայտարարագրի մեջ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվող սահմանաչափի վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարում են տուգանք՝ սահմանաչափը գերազանցող մասի 20%-ի չափով (հոդված 16, կետ 3, ենթակետ «ա»), ընդ որում՝ նշված խախտումը թույլ տված հարկ վճարողները պարզեցված հարկ վճարող համարվելու համար օրենքով սահմանված այլ պահանջները բավարարելու դեպքում շարունակում են մնալ պարզեցված հարկ վճարող՝ մինչև տվյալ տարվա վերջը (հոդված 16, կետ 3.1).

4) պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին, եթե նա գրավոր դիմում է ներկայացրել իր հաշվառման վայրի հարկային մարմին՝ ընդհանուր կարգով հարկման, հաշվառման և

հաշվետվությունների համակարգի անցնելու վերաբերյալ (հոդված 6, կետ 1, ենթակետ «ա»)՝ այս դեպքում պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին նշված ենթակետերով սահմանված փաստը տեղի ունենալու եռամսյակին հաջորդող ամսվա 1-ից (հոդված 6, կետ 2):

Ստեղծված իրավիճակում Օրենքի նշված դրույթների կիրառման և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված նորմի («հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող 3 տարին լրացնելուց հետո») համադրման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

Տվյալ դեպքում՝ հարկման կարգերի փոփոխությունը (պարզեցված հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին), Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, տեղի է ունենում 2007 թվականի ապրիլի 1-ից և Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով սահմանված տուգանքը կիրառելի է, եթե խախտումը հայտնաբերվել (արձանագրվել) է մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը: